# Ո Ր Ո Շ Ու Մ
## 23 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի «Բաղրամյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 20 հունվարի 2026թ. կազմակերպված «ԱՄՓՀ-ԲՂՐՄ-ՀՄԱԱՊՁԲ-03/26» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սարիբեկյան Սամվել Սահակի»Ա/Ձ -ն (այսուհետ նաև Մասնակից) :

ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի «Բաղրամյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՄՓՀ-ԲՂՐՄ-ՀՄԱԱՊՁԲ-03/26» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 13.02.2026թ. «Սարիբեկյան Սամվել Սահակի»Ա/Ձ-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծ, որի հաստատման և ներկայացման համար օրենքով սահմանված վերջնաժամկետը եղել է 2026թ փետրվարի 20-ը, սակայն «Սարիբեկյան Սամվել Սահակի» Ա/Ձ-ն սահմաված ժամկետում չի ներկայացրել պահամջվող պայմանագիրը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի բ պարբերությամբ՝ (որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց) և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը **որոշում եմ** ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԱՄՓՀ-ԲՂՐՄ-ՀՄԱԱՊՁԲ-03/26 | 5.7.9.11.12. | 5. Կաթ<br>7. Հավի կրծքամիս<br>9. Մածուն<br>11. Պանիր լոռի<br>12. Պանիր չանախ | 5. 650000<br>7. 1470000<br>9. 700000<br>11. 429000<br>12. 312000 | «Սարիբեկյան Սամվել Սահակի»Ա/Ձ | 49964669 | ՀՀ. Արմավիրի մարզ , գ. Բամբակաշատ. 18փ. 1փկղ, 1տ | 23.02.2026թ | «Բաղրամյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ | Հրաժարվել է պայմանագիր կնքելուց | Սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի իր կողմից հաստատված տարբերակը: |

ՏՆՕՐԵՆ՝ Ա. Գալստյան